

ՍԻՆԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պրոֆ. ՄԱՅԲԼ Է. ՍԹՈՒՆ (Հոլանդիա)

Սինայի թերակղզում անցած երկու տարիներին կազմակերպված հինգ արշավախմբեր ուխտավորների գլխավոր ճանապարհներին հայտնաբերել են հայերեն արձանագրությունների մինչ այժմ անծանոթ ու անսպասելի մի հավաքածու:

Անցյալի գիտնականներին այս վայրերից հայտնի են եղել հայերեն մի քանի արձանագրություններ: Դրանցից մեկն ընգորինակել ու հրատարակել է Յուլիուս Յուտինգը 1891 թ., նաբատերեն արձանագրությունների իր հավաքածուի մեջ, բայց նա չի պարզել գրությունը ու չի վերծանել արձանագրությունը¹: Ուադի Հագգագի շրջանում գտնվող նաբատերեն և հունարեն արձանագրությունների իր հրատարակության մեջ Ավրահամ Նեգևը հիշատակում է այդ նույն երկրամասում հայերեն մի շարք արձանագրությունների գոյությունը²: Հայերեն ուրիշ արձանագրություններ ընդգրկված են Սինա լեռան վրա գտնվող Մովսեսի քարանձավի հանածոյի զրոշմների լուսանկարներում, որոնք, սակայն, չեն գիտակցված որպես այդպիսիք³, իսկ մի այլ արձանագրություն հրապարակված է լուսանկարից⁴: Այսուամենայնիվ, Սինայի թերակղզում հայերեն արձանագրությունների սիստեմատիկ որոնումը ձեռնարկվել է միայն սույն հոդվածի հեղինակի՝ դեպի այդ վայրը կատարած դիտարկումների շնորհիվ⁵:

Այս որոնումների արդյունքները հնարավոր է հանրագումարի բերել այսպես. ներկայումս Սինայի թերակղզուց մեզ հայտնի են 113 հայերեն և 20 վրացերեն արձանագրություններ: Հայերեն արձանագրությունները գտնվում են դեպի թերակղզու խորքը՝ Ս. Կատարինեի վանքը և Զեբել Մուսա (ավանդական Սինա լեռը) տանող ուխտագնացության գլխավոր ճանապարհների վրա: Արձանագրությունների մեծագույն մասը (թվով 73) գտնվել է Սինայի արևելյան մասում՝ Ուադի Հագգագի ավազուտ բլուրների վրա: 27 արձանագրություն հայտնաբերված են Սինա լեռան կա՛մ բարձունքին, կա՛մ Մովսեսի քարանձավի մուտքի մոտ գտնվող քարերի վրա: Հայերեն շորս հիշատակագրեր են գտնված, որոնք փորագրված են Սինայի ստորոտում, Ս. Կատարինեի վանքի Ս. Կատարինե եկեղեցում՝ Հուստինիանոսի դռների վերևում: Զեբել Մուսան Զեբել Կատարինայից բաժանող ձորակում՝ Ուադի Լեջայում

¹ J. Euting, *Sinaitische Inschriften*, Berlin, 1891, տախտակ 1, № 4A.

² A. Negev, *The Inscriptions of Wadi Haggag*, Jerusalem, 1977, p. 11, 15, 26.

³ I. Ševčenko, *The Early Period of the Sinai Monastery in the Light of its Inscriptions*, *Dumbarton Oaks Papers* 20, 1966, pl. 13–14, after 264.

⁴ Ն. Մովսէկան (Ն. Պողարյան), *Սինայական արձանագրություն մը*, «Սին», 1966, № 10–12, էջ 538–539:

⁵ M. E. Stone, *Armenian Inscriptions from Sinai: Intermediate Report*, Sydney, 1979.

հայտնաբերված շորս արձանագրությունները, որոնք առանձին են ներկայանում, կարող են դիտվել իբրև Սինա լեռան և Ս. Կատարիների վանքի արձանագրությունների մասը։ Արևմտյան Սինայում ի հայտ են եկել հայերեն մեկ արձանագրություն՝ Ուադի Մադարայի սկզբում, ու ևս չորսը՝ Ուադի Մուքաթարում։

Ապշեցուցիչ է հայերեն արձանագրությունների քանակն ու տարածքը։ Հայերը, գեթ այնքանով, որքանով կարելի է գատել հիշատակագրերի հանդեպ նրանց ունեցած հակումից, թվում է թե Սինա ուղևորվող քրիստոնյա ուխտավորների ամենաեռանդուն խմբերից են եղել։ Զարմանալին, սակայն, հայերեն արձանագրությունների ոչ թե սոսկ քանակն է, այլև ժամանակը։ Ուադի Հագագի արձանագրություններից մեկը կրում է Հայոց 420 թվականը, որը համապատասխանում է մեր թվականության 971-ին։ Հիշյալ վայրում գտնված մեկ այլ արձանագրություն ունի հայերենի վրա հետագայում արաբերեն քառակուսի տառերով ավելացված գրություն։ Վերջինս հանձնվել է Երուսաղեմի պրոֆեսոր Մ. Շարունի քննությանը, որն այն թվագրել է ամենաուշը IX դարով։ Հետևապես, հայերենը պիտի առավել վաղ ժամանակի պատկանի։

Ուադի Հագագի արձանագրությունների հիմնական մասը առաջին հաղարամյակի հետ կապելու վերը բերված տվյալները, անշուշտ, հաստատվում են նաև նրանց հնագրագիտական քննությամբ։ Այն, որ դրանք հիշատակագրեր են, տարակույս լինել չի կարող և գրված են հայերեն երկաթագրով, բացառությամբ մի քանիսի, որոնք անցման շրջանի երկաթագրով ու բուլղոգրով են։ Բուլղոգրը լրիվ կիրառություն էր գտել XII դարում, իսկ Ուադի Հագագի արձանագրություններից միայն մեկն է, որ կարող է գիտվել իբրև անցման շրջանի բուլղոգրի։ Հիշյալ արձանագրությունների վաղեմության մասին են վկայում հնագրական նաև այլ տվյալներ, ինչպես, օրինակ, փակագրությունների ոչ այնքան լայն կիրառությունը, հապավումների սահմանափակումը՝ պատիվներով և տեխնիկական-հնագրական այլ առանձնահատկություններով։

Ուադի Հագագի արձանագրությունների հավաքածուն, թվում է, թե հիմնականում մինչև 1000 թվականն է, չնայած հիշյալ վայրի ամենաուշ շրջանին վերաբերող արձանագրությունները կարող են վերագրվել թերևս XI—XII դդ.։ Այնուամենայնիվ, շատ բնական է, որ հենց Սինա լեռան շրջանում գտնվողները ընդգրկեն ավելի երկար ժամանակամիջոց։ Ի վերջո, Ուադի Հագագը ուխտավորներին դեպի Սինա լեռը առաջնորդող հնարավոր ուղիներից միայն մեկն է և հավանական է, որ տարբեր ժամանակներում գոյություն ունեցած լինեն նաև այլ ճանապարհներ՝ ստեղծված ապահովության ու քաղաքական պայմանների թելադրանքով։ Հետևապես, ինչպես ցույց են տալիս հնագրական տվյալներն ու թվակիր արձանագրությունները, Սինա լեռան վրա հանդիպում ենք թվականների ավելի երկար մի շարքի։ Գրեթե բոլոր արձանագրությունները բովանդակում են սոսկ հատուկ անուններ, թեև դրանցից մի քանիսն ունեն այլևայլ հիշատակագրային տվյալներ։ Ն. Պողարյանի հրատարակած Սինայի հայերեն արձանագրությունը միակն է, որի հեղինակների ինքնությունը հնարավոր է պարզել։ Այդ արձանագրությունը որոշակիորեն

⁶ M. E. Stone, նշվ. աշխ., էջ 3—4.

թվագրվում է XV դարի կեսերով, իսկ հեղինակները՝ երուսաղեմցի չորս հայ կրոնավորներ են, որոնց դեպի Սինա կատարած ուխտագնացության մասին վկայում են նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանի գրադարանում պահվող ձեռագրերի հիշատակարանները⁷:

Հիշյալ արձանագրությունների կարևոր առանձնատկություններից մեկն էլ, բացի նրանց քանակից ու վաղեմությունից, ողջ թերակղզով մեկ տարածված լինելն է: Ուխտագնացության վերաբերյալ էջերիայի զեկույցները (շուրջ 381 թ.) վաղեմի ուխտավորների նախասիրած ուղին հիմնականում համարում են արևմտյան Սինայի ճանապարհը⁸: Այդպիսի մի ճանապարհ՝ սկիզբ առնելով Երուսաղեմից, անցնելով ծովով, իջնում էր Միջերկրականի ափով դեպի Պելուսիում, ապա ուղղվում էր հարավ՝ դեպի Քլիսմա, շարունակվում էր Սուեզի ծոցի երկայնքով, այնուհետև շրջվում էր դեպի ցամաք՝ Ուադիների կոմպլեքսի միջով, որոնցից գլխավորները հանդիսանում էին Ուադի Մուքաթարը և Ուադի Ֆիրանը՝ ավանդական Ռեֆիդիմը: Արդարև, էջերիան ու նրանից հետո ուխտավորներից շատերը Ջեբել Մուսային մոտեցել են արևմուտքից՝ անցնելով նազբ էլ-Հաուայով⁹: Այնուամենայնիվ, արևմտյան այս ճանապարհի վրա հայտնաբերվել են միայն հայերեն հինգ արձանագրություններ, որոնցից երկուսը պահպանված են այնպիսի փոքրիկ բեկորներով, որ անկարող են որևէ թվական հուշել, իսկ մնացյալները արտակարգ հնության որևէ նշան չունեն:

Ուխտավորների զեկույցների մեծ մասում հիշատակություն չկա այն մասին, թե արդյոք արևելյան Սինայով անցնող ճանապարհը Ալլալից (այժմյան էյլաթ) իջնում էր ծովի երկայնքով ու ապա շրջվում դեպի ցամաք, թե՞ անցնելով Ռաս էլ-Նազբով, ուղղություն էր վերցնում դեպի հարավ՝ Ուադի Հեսիով: Ուշագրավ է, սակայն, որ հենց այդ ճանապարհի վրա և, մասնավորապես, Ուադի Հազգագում է հայտնաբերված արձանագրությունների ալդպիսի հոծ մի զանգված: Հարց է առաջանում, թե որքանով են ճշմարտացի ուխտավորների պահպանված զեկույցները: Այն փաստը, որ արևելյան ճանապարհի մասին VII դարի հեղինակներ Թեոդոսիոսի և Պիլենցա Ուխտավորի մոտ եղած պարզ հիշատակություններից բացի, այլ մանրամասն տեղեկություններ չունենք, դեռևս չի նշանակում, թե այդ վայրը քիչ են հաճախել¹⁰: Արդարև, արևելյան ճանապարհի վրա հայտնաբերված հայերեն ու հունարեն արձանագրությունների այդ հսկայական գտածոն մեզ թելադրում է վերանայել ուխտավորների հաղորդումները: Ուշագրավ է, որ թեև Նեգեի աշխատությունը գրանցում է Ուադի Հազգագում գտնված ավելի քան 200 հունարեն արձանագրություններ, հունարեն այդպիսի կարևոր հավաքածուներ առկա են նաև Ուադի Շելլալում՝ արևմտյան Սինայում, մի վայր, որն առաջին անգամ տողերիս հեղինակի ու նրա գործընկերների ջանքերով է ճանաչվել իբրև նաբատյան ու քրիստոնյա ճանապարհորդների համար գլխավոր

⁷ Ն. Մովական, նշվ. աշխ., էջ 538—539:

⁸ J. Wilkinson, *Egeria's Travels*, London, 1971. Նույնի՝ *Jerusalem Pilgrims before the Crusades*, Jerusalem, 1977, map № 1.

⁹ J. Wilkinson, *Egeria's Travels...* էջ 92—93.

¹⁰ J. Wilkinson, *Jerusalem Pilgrims...* p. 20, 70; հմտ. P. Mayerson, *The First Muslim Attacks on Southern Palestine*, 1964, p. 185—187.

կայան ունեցող մի վայր, ինչպես նաև Ուադի Մուքաթթաում և Ուադի Ֆիրանում¹¹, Հնարավոր է, որ արևելյան ուղու եզրագծային կողմնորոշումը և այդ ճանապարհին ընկած վանական հաստատությունները հրապուրիչ եղած լինեն այնպիսի ուխտավորների համար, ինչպիսիք էին, օրինակ, էջերիան ու Պաուլան, որոնք ճանապարհորդել են մեկ ամրոցից դեպի մյուսը և հոգևոր մեկ կենտրոնից գեպի մեկ ուրիշը: Սակայն Երուսաղեմից եկող ուխտավորների համար արևելյան Սինայի միջով անցնող ճանապարհը թերևս ավելի հոգնեցուցիչ, բայց և այնպես առավել ուղիղ էր ու կարճ: Հետազոտական հետազա աշխատանքներ են պահանջվում վերջնականապես պարզելու համար արևելյան Սինայի՝ ուխտավորների անցած ճանապարհների մանրամասնությունները: Տողերիս հեղինակը հույս ունի, որ ինքն ի վիճակի կլինի իրագործելու այդ բանը: Տվյալ վայրում արձանագրությունների ու խաչերի հայտնաբերումը կհավաստի այդ ճանապարհների առկայությունը, որը մեզ համար արդեն բացահայտված է շնորհիվ հիշյալ տարածքի թելադրած պայմանների ու ջրի աղբյուրների տեղաբաշխման:

Ուադի Հագգագի շրջանում (որը գտնվում է արևելյան Սինայում), Ջեբել Մուսայի վրա ու նրա շրջակայքում, ինչպես նաև Ուադի Մուքաթթաում և Ուադի Մադարայի շրջաններում հայտնաբերված հայերեն արձանագրությունները ուսումնասիրելուց բացի, հետազոտել ենք նաև Թիհի անապատից դեպի ներքև տանող գլխավոր ճանապարհը: Այս սարահարթով պետք է անցած լինեն կենտրոնական ուղիով Սինա լեռը հասնել ցանկացողները: Հայտնի է, որ XV դարի ուխտավոր Ֆ. Ֆաբրին (և անկասկած նա առաջինը չէր) Ս. Կատարինեի վանքն է ուղևորվել ո՛չ արևելյան, ո՛չ էլ արևմտյան ճանապարհներով, այլ՝ Թիհի անապատի վերևով: Թվում է, թե Ֆաբրին անցած ուղին, որը միայն վերջերս է մասամբ լուսաբանվել, ընտրել է նրա ուղեկցորդը՝ ցանկանալով խուսափել ջրային վայրերից, ուր կարող էր գողերի կամ այլազան հարձակումների սպառնալիք լինել¹²: Այսպիսով, նա պիտի շրջանցած լինի Թիհի վրա գտնվող Նախլ կոչված հանրածանոթ վայրը, որը հանդիսանում է ուխտավորներին Մեքքա առաջնորդող ճանապարհի՝ Դարբ էլ-Հագգի գլխավոր ջրային վայրը: Մենք հետազոտեցինք Թիհից ներքև տանող գլխավոր ուղին, Նագբ Ռաքնեն և Ուադիները, որոնք այդ ճանապարհը կապում են Ջեբել Մուսայի շրջանի հետ: Նագբ Ռաքնեի ստորոտում հայտնաբերեցինք հունարեն արձանագրություններ ու խաչեր՝ թեև փոքրաթիվ: Սա ցույց է տալիս, որ այդ ճանապարհով ուխտավորներ են անցել, թերևս առավել ուշ, քան հայերն են ուղևորվել դեպի Սինա:

Հայ ուխտավորների՝ Սինայում եղած լինելու մասին պահպանված է պատմական վկայություն, որը հիմնականում ընդգրկում է VII դարը: Այդ վկայությունը մեկն է այն պատմություններից, որոնք վերագրվում են Անաստաս Սինայեցուն և պատմում է այն մասին, որ 800 հայ ուխտավորներից բաղկացած մի խումբ այցելել է վանքն ու լեռը VII դարի կեսերին¹³: Ուխտագնա-

¹¹ J. L. Burkhardt, *Travels in Syria and the Holy Land*, London, 1822 p. 620—621: հմտ. A. Negev, նշվ. աշխ. էջ 79.

¹² H. F. M. Prescott, *Once to Sinai*, London, 1957, p. 59—60, 67.

¹³ F. Nau, *Le texte grec des récits du moine Anastase sur les saints pères du Sinai*, „Oriens Christianus“ 2, 1901, p. 81—82.

ցության մասին հաղորդումներ կան նաև հայոց Կոմիտաս կաթողիկոսի և Երուսաղեմի հույն պատրիարք Մոզեստոսի նամակագրության մեջ՝ VII դարի սկզբում, այն ժամանակ, երբ Երուսաղեմը գրավել էին պարսիկները¹⁴։ Սրանց կարելի է ավելացնել սլաոմական այլ տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, թե VII և հետագա դարերում ինչպիսի մեծ շափերի է հասել հայերի ուստագնացությունը¹⁵։ Սա, անշուշտ, մեծ հետաքրքրություն է ներկայացնում, որովհետև ամենաուշը VII դարի կեսից Սինայի ողջ թերակղզին մահմեդականացնելու տիրապետության տակ էր և, չնայած դրան, ինչպես երևում է, հայերի ուստագնացությունը նշված ժամանակաշրջանում աշխույժ է եղել և շարունակվել է մինչև խաչակրաց ժամանակները ու թերևս ավելի երկար։

Հիշյալ արձանագրությունների կարևորության մասին մի դիտողություն ևս պիտի անել, որը վերաբերում է հայկական հնագրությանը և հայոց անձնանունների ուսումնասիրությանը։ Առաջին հազարամյակին պատկանող հայերէն արձանագրությունների խումբը խիստ սահմանափակ է, իսկ վաղ շրջանի արձանագրություններն առավել փոքր թիվ են կազմում։ Դեռ ավելին. վաղ շրջանի հայերեն բոլոր արձանագրությունները, գրեթե առանց բացառության, կոթողային են, եկեղեցիների կամ նման շինությունների հիմնադրմանը վերաբերող վիճադրեր։ Պաշտոնական բնույթ ունեցող այդ արձանագրությունները հնագրական առումով կարող են ավելի շուտ ենթակա լինել ոչ թե ձեռագրային, այլ վիճադրության ավանդույթին։ Հայերեն թվակիր հնագույն ձեռագիրը պատկանում է IX դարի վերջին, թեև պահպանված են որոշ պատասեփներ, որոնք կարող են առավել հին լինել¹⁶։

Սինայի արձանագրությունների թվագրումը որոշվել է թվակիր վիճակի արձանագրություններում որոշ տառաձևերի դարձացումը հետազոտելու միջոցով։ Այսուհանդերձ, քանի որ դրանք ավելի շուտ հիշատակագրեր են, քան մասնագետ քարգործ վարպետների արձանագրություններ, շատ հավանական է, որ մասնագիտական վիճադրերի թվականները լինեն պահպանողական, և ոչ թե կամայական։ Որովհետև անհավանական է, որ հիշատակագրի անվարժ հեղինակը իբրև նախատիպ վերցնի քարի վրա արձանագրելու, վիճադրության ավանդույթը. նա, հավանաբար, իբրև օրինակ վերցրել է ձեռագրային գրչությունը։ Հայտնի է, որ ձեռագրային գրչությունը հակված է տառաձևերը ավելի արագ փոփոխելու, քան այդ անում է վիճադրությունը։

Մեկ այլ հանգամանք, որ դժվարացնում է Սինայի հնագույն արձանագրությունների թվագրումը, այն է, որ մենք չունենք VI դարին պատկանող հայերեն թվակիր արձանագրություններ։ Հայ գրչությունն սկզբնավորվել է V դարում և հայտնի է միայն մեկ արձանագրություն՝ Տեկորի եկեղեցունը, որի թվականը որոշվում է շնորհիվ V դարի վերջում հիշված պատմական անձնավորությունների¹⁷։

¹⁴ «Պատմություն Սեբեոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 116—119։

¹⁵ K. Hintlian, History of the Armenians in the Holy Land, Jerusalem, 1976 p. 6—17.

¹⁶ Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973։

¹⁷ Գ. Հովսեփյան, Գրչության արվեստը հին հայոց մեջ, մասն Գ, Վաղարշապատ, 1913, էջ 5—6։

Սովորաբար Երուսաղեմի հայերեն արձանագրություններ ունեցող խճանկարները վերագրվում են VI դարին և պրոֆեսոր է. Կեցինջերը ինձ հայտնել է, որ հիշյալ խճանկարների կատարման տեխնիկան համապատասխանում է VI դարին: Այդուհանդերձ, գիտական բարեխղճությունը թելադրում է հնագրական օրինաչափության կիրառությունը հիմնավորել միայն այնպիսի արձանագրություններով, որոնք ունեն որոշակի թվական և կամ հիշատակում են պատմական անձնավորություններ, որոնց ժամանակը հնարավոր է որոշել այլ միջոցներով: Վերևում ասվածից հետևում է, որ խնդրո առարկա հայերեն հիշատակագրերի մի մասին վերադրված VII դարը կարող էր, առաջին հարձակ մի գիտնականի կողմից, ավելի հտ տաքվել ու հասցվել մինչև VI դար: Սինայի հայերեն արձանագրությունների վաղեմությունն ունի իր դուրսհանգրվանը ի դեմս վրացերեն 20 արձանագրությունների, որոնք հայտնաբերվել են մենույն վայրերում: Մ. Վան էսբրուքը, որը հրատարակության է պատրաստում այդ վրացերեն արձանագրությունները, ինձ հայտնել է, որ դրանց հնադրությունը պատկանում են V դարի վերջին, իսկ նորագույնները կարող են հասցվել մինչև XIV դարը: Սա շատ կարևոր մի հայտնություն է, քանի որ վրացիները ևս, հայերի նման, իրենց դրչությունը սկսել են V դարում: Նշելով է, որ Սինայի հունական քրիստոնեական արձանագրությունները ամբողջությամբ չեն հավաքված, ուսումնասիրված, թվագրված կամ արժեքավորված, բանի որ նրանք անկասկած կնպաստեն տվյալ երկրում ավելի քան մեկ հազարամյակ գոյատևած ուխտադնացության բնույթի մասին մեր ունեցած իմացության և՛ ընդարձակմանը, և՛ խորացմանը:

Սինայի հայերեն արձանագրությունների նշանակությունը, ըստ երևույթի, հետևյալն է. առաջին՝ բացահայտվում է դեպի Ավետյաց երկրի հայերի կատարած ուխտագնացությունների պատմության կարևոր մի կողմը, մի հարց, որի մասին քիչ կան պատմական հաստատ տեղեկություններ, որոնք վերաբերեն մինչև խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանին: Այժմ, շնորհիվ այդ արձանագրությունների, իմանում ենք, որ սկզբից ևեթ ու մինչև խաչակրաց ժամանակները, և դեռ ավելի հետո, Սինայում հայ ուխտավորներն աշխույժ երթևեկ է գոյություն ունեցել: Երկրորդ՝ հայերեն հիշատակագրերի նշված խումբը շոշափելի քանակով հարստացնում է մինչև 1000 թվականը հայերեն արձանագրությունների հավաքածուն, այդպիսով նպաստելով հայկական հնագրության և վիճաբանության ուսումնասիրության հետագա կատարելագործմանը: Երրորդ՝ հայերեն արձանագրությունների տեղաբաշխումը ստիպում է վերանայել ուխտագնացության՝ Սինայով անցնող ճանապարհները, մի քննություն, որին ձեռնամուխ է եղել տողերիս հեղինակը, ուսումնասիրելով և՛ գրավոր աղբյուրները, և՛ տեղանքը: Չորրորդ՝ հետաքրքրական է իմանալ, որ ուխտավորների սովորությունն է եղել իրենց անուններից բացի ոչ մի կոչում կամ տիտղոս չարձանագրել: Ավելի քան 100 արձանագրություններից միայն երեքն են, որ բովանդակում են հոգևորական տիտղոսներ. ոչ մեկում չկան ազնվականական մականուններ՝ այնպիսիք, ինչպիսիք հանդիպում են նվիրատվական կամ հովանավորական բնույթի հայերեն արձանագրություններում: Ոչ մեկում չկան տոհմանուններ, որոնք ցույց տալեն ուխտավորի ծննդավայրը, ապրած շրջանը կամ գյուղը: Որոշ

անուններ կարող են ճանաչվել իբրև հալ ազնվականների գերդաստանների, հատկապես Ծյունյաց ազնվական տանը պատկանող անուններ:

Հետաքրքրություն ներկայացնող մի վերջին կողմն էլ այն է, որ ուխտավորների այդ երթևեկը շարունակվել է ոչ միայն բյուզանդական շրջանում, այլ նաև արաբական տիրապետության տարիներին: Անշուշտ դա հայտնի էր արդեն շնորհիվ Նեսանա պապիրոսի, բայց լավ է այդ բանի հաստատումը ունենալ նաև արձանագրությունների միջոցով:

Այսպիսով, շնորհիվ Սինայում գտնված հայերեն արձանագրությունների, ի հայտ է գալիս Ավետյաց երկրում հայերի ունեցած կարևոր պատմության մեկ այլ կողմը, որով Սինայի թերակղզու և Սինայի բրնձենեղենի պատմության մեջ բացահայտվում է մի նոր կարևոր էջ:

АРМЯНСКИЕ НАДПИСИ СИНАЯ

Проф. МАЙКЛ Э. СТОУН (Голландия)

(Резюме)

До недавнего времени известные надписи Синайского полуострова были немногочисленны. Автор настоящей статьи и его коллеги в течение последних двух лет провели научные экспедиции и выявили новую большую коллекцию надписей, из которых 113 армянских и 20 грузинских. Новонайденные надписи находятся в разных местах полуострова, больше всего их в восточной части—Уади-Акабе. Это в основном памятные надписи паломников, относящиеся к I тыс. н. э., причем самые древние из них могут восходить к VI—VII векам. Они свидетельствуют прежде всего о том, что еще до крестовых походов и раньше, в годы арабского владычества, паломничество армян в «страну обетованную» было чрезвычайно оживленным. Эти находки обогащают коллекцию армянских надписей I тыс. н. э. и дают основание пересмотреть пути паломников, проходившие через Синай.